

R. P. Kalomkarian, Mechitarist  
(Autriche) W. 4. Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարկիսի վեցամսեայ	6
Արսասահմանի համար սարկիսի	15
վեցամսեայ	8
Անկերիկայի համար սարկիսի	3 ֆր.
վեցամսեայ	1 50

Պատկերներ սողոտս քին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սարկիսի է. երեսին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կրչայ:

Վառնայի համար 10 սարկիսի

# ՇԱՐՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱՋԳԱՐԻՆ. ՔԱՂԱՔԱՄԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԻՔՆԱՐԻ ԵՒ ԵԱՐԱԹ ՕՐԾՐԸ

ՇԱՐՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԴ ԳԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԻ

Նամակի և գրքի զրոյս խմբագրութեան հասցին

Редакция на вѣстники „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Char oum“ Yarna (Bulgarie)

Պուշկարիոյ համար 15 ՍԱՆԻՐ

Արսասահմանի համար 10 ՍԱՆԻՐ

Գրութիւնք և ս չեկ սրտիւր

## ԳԱԼԻՑԻՆԻ ԶԵՆԱՆՈՒՄ Է

Անցեալ անգամի մեր յօդուածում յայտնել էինք որ Յրէյզէ-լց յետոյ Գալիցիան էլ պէտք է չքանայ Կովկասից. որպէսզի Կովկասահայերը մի քիչ զգան թէ ուս կառավարութիւնը ուզում է իրապէս մի քիչ փոփոխութիւն մտցնել իր գէպի հայերը բռնած ուղղութեան մէջ:

Վերջերս «Մատեն» Փրանսական թերթին Պետերբուրգից հեռագրում են հետեւեալը. — Հաստատուած է որ Ալէքսէեւի և Կանչիւի ու նշանակվի Կովկասի կառավարիչ, որովհետեւ Գալիցիան կ'իւնը, իր ամուսնու վրա եղած սպանութեան փորձից յետոյ այլեւս չէ ուզում Կովկաս վերադառնալ:

Ինչպէս երեւում է ուս կառավարութիւնը ուզելով Գալիցիան վարկը փրկել և չուզելով որոշ կերպով ցոյց տալ թէ հայերին զիջողութիւն է անում, Գալիցիան Կովկասից հեռացման պատրուակ բռնում է նրա կնոջը, որը գուցէ սպանութեան փորձը եղած օրից կը ցանկար հեռանալ այն Կովկասից ու հայերից, որոնք կանանց վերաբերմամբ ասպետ լինելով հանդերձ, արդէն գիտակցում են թէ բռնակալներին միակ սանձահարողը գաղտնիք և գնդակն են: Եթէ Գալիցիան իրապէս հեռանում է Կովկասից, բարի ճանապարհ, ճակատում գտնված Կովկասեան նշանն էլ բաւ է նրան դողահար գիշերներ անցնել տալու և իր նմաններին զգացնելու որ նրա ճամբով կը գնան Կովկասի նման երկրի բոլոր կառավարիչները:

Ըստ «Մատեն»ի ուրեմն Գալիցիան պէտք է յաջորդէ Ալէքսէեւի:

Ալէքսէեւը ինչ տեսակ կառավարիչ կը լինի. այդ մեզ յայտնի չէ: Ծայրագոյն արեւելքի

պէս վայրերի տեղում նա եղել է գրեթէ արքայական իրաւունքներ ունեցող մի փոխարքայ և թերեւս արդէն սովորած լինի սանձարձակութեան:

Կովկասը կուրտուրապէս աւելի բարձր երկիր է և նրա բնակիչները աւելի ընդդիմադրական արամադրութիւններով օժտուած. արդեօք կառավարութիւնը Ալէքսէեւին ուղարկում է Կովկասի ներքին աւելի սանձահարելու, հեզցնելու համար, թէ ընդհակառակը ուզում է սկիզբ դնել մեզմ և մտքեր ու սրտերը խաղաղեցնող քաղաքականութեան: Դա ապագան միայն կարող է պարզել:

ՎԱՐԴՈ

### ՌՈՒՍՈՑ ՆԵՐՔԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

«Ն. Պ. Պրէստէ» թերթին գրում են որ Վարչապետը, Սմոլնսկի և Մոզրիւսկի նահանգներում մեծ և արիւնայեղ ընդհարումներ են տեղի ունեցել ժողովրդի և կառավարութեան միջև, որովհետեւ փողոցներում մեծ քանակութեամբ յեղափոխական կոչեր են տարածվել: Վարչապետից դուրս, մտահիւս հազար հոգի ժողովրդային բազմութիւն հաւաքվել է Վոլսկի զղնակի մտ և այնտեղից խմբերի բաժանված, կարմիր դրոշակներով, յեղափոխական ելքեր երգելով, ու հանկ-գի միապետութիւնը՝ գոչելով, դիմել է դէպի քաղաք: Յուցարարների հանդիսաւոր գնացրի առջեւը կարում է ստիկանութիւնը և տեղի է ունենում արիւնայեղ ընդհարում: Ժողովուրդը քարերով, բիրեքով և երկաթի կը տորներով յարձակվում է ստիկանութեան վրայ. ստիկանապետի հրամանով ստիկանները հրազենի են դիմում: Սպանվում է մի ստիկան սպայ, ծանրապէս վիրաւորվում են երկուսը, և թեթև կերպով հասարակ ստիկաններ: Ժողովրդի կողմից սպանւածների և վիրաւորւածների թիւը յայտ-

նի չէ. Ուսիկանութեան ցուցարարներին ճնշելու գործով զբաղված միջոցին, պահեստի զինւորները յարձակվում են հրէական խանութների և տների վրա ու թալանի տալիս. հրէաների մէջ էլ վիրաւորվածներ կան:

Ահա այդ է լեհական նահանգների կացութիւնը: Փինլանտիայի մասին էլ լաւ չեն խօսում, մանաւանդ Պէլլէն սպաննող Շաուսանի ձերբակալված հօր մտաւնված այն ծրագրից յետոյ, որով պարզվում է թէ՛ Փինժոզովրդի մէջ դադարի հրացանաձիգ խմբեր են կազմակերպվելու եղել ուս միապետութեան ծանր կացութիւնից օգտվելու և սպառնալով թերեւս քաղաքները համար:

Կովկասի կացութիւնը արդէն յայտնի է:

Մինչդեռ մի կողմից ժողովրդային ներքին զժողոհութիւնները իրենց զենիթին հասնելու մտայնպէս պայթումներ են աւազ բերում, ներքին գործոց նախարար Միրսկին ճիգեր է թափում միջին ճանապարհը գտնելու ներքին զժողոհութիւնները գոնէ մասամբ շեղաքացնելու համար, միւս կողմից լաւ է պատում թէ Միրսկու կացութիւնը խաղաղած է շնորհիւ պաշտական ինտրիգներին, և նա մտադիր է հրաժարական տալ:

Օրորվում է ուսական միապետական ռէժիմը, ու խեղկորոյս միապետականները չեն կարողանում որոշ ճանապարհ, ուղղութիւն բռնել միպետական փթած նաւի վեկը վարելու համար:

Միայն ուս յեղափոխականներն են որ մէջտեղում չեն երեւում, թերեւս ժամանակը հասած չը համարելով: Ինչպէս երեւում է նրանք սպասում են որ երկարատեւ պատերազմը իր գրգռիչ ազդեցութիւնը վերջնապէս գործէ ընկճված, խորտակված ուս ժողովրդի վրա, շուտ բռնկվելու համար նիւթ պատրաստ է, որպէս զի դիւրաւ կարենան այն մեծ

հսկայական հրդեհը ձգել, որի անունը պէտք է լինի Ռուսական ընդհանուր յեղափոխութիւն:

Սե իրապէս Ռուսաստանը ներկայացնում է մեծ յեղափոխութեան մի նոր վառարան, ուր հասարակած են փայտեր և տարիներ է վերջորանում են հաչորանում ու մի փոքրիկ կայծի մի ուժեղ քամի պէտք է զգացվում ամբողջ վառարանը հրավառելու: Արդեօք այդ հրաբորբուքի քամին ճարտական պատերազմը չէ՞ լինելու:

Եթէ ժողովրդային այդ մեծ ազդեցակ էր, որի ժանիքները հետզհետէ խրվում են ամէն մի ուսասպատակի մտի մէջ, չը պէտք է կարողանայ ցնցել եզուրթեան աստիճանի հասցրած ուսասպատակին, հապա էլ ի՞նչը...:

Ռուս ֆինանսական նախարարը յայտարարել է որ պետական ֆինանսները գրութիւնը շատ լաւ է. մինչդեռ Ռուսիան այլեւս չէ կարողանում իր նոր փոխառութիւնը ամբողջովին Փրանսայի այդ միակ հաստարիմ և սրբատաբաց կրեքիտորի մտ կնքել. այլ պարտաւորվում է կէսը Գարիզում կէսն էլ Իէրլինում ճարել: Ահագին գումարներ կուլ գնացին պատերազմի անյոգ ստամոքսում, ու պատերազմը ոչ միայն վերջանալուն մտ չէ, այլ նա գեռ շատ երկար պէտք է տեւէ, ու աւելի մեծ ծախսեր պահանջէ որովհետեւ աւելի մեծ քանակութեամբ զինւորներ պէտք է պահվեն պատերազմի դաշտում:

Սե ուսը իր աւանդական «նիչեօն» ասելով, միսիթարվում է: Բայց չէ՞ որ մահաւանդ յետոյ իրական ոչինչը. «նիչեօն» է տիրապետում:

ՄԻՆԱՍ ՏՕԼՊՈՒՅԵԱՆԻ ՅԻՇՆԱՍԱԿԻՆ

(ԳԱՅԼ-ՎԱՀԱՆ)

Մեր վաթանի խոր ճորերէն՝ Ազատութեան խօլ քամին, Ուրապադ հայու սրտոց անցաւ Կարէ, ձայնեց ժողովին:

Ազատութեան վառ կարօտով, Մեր անբարոք ջերմ վառած, Ատին մասին, ուրմք, սուրեր թրան երկիր կրծքաբաց:

Մայրեր քոյրեր տաք-տաք համբոյր՝ Դրոջմեցին քաջերուն՝ Փոխան արցունք, ա՛խ ու վրէ՛ժ, Իբրին անոնց կուրծքերուն:

Հայ զինուորներ թրան գացին, Ա՛խ դէպի հոն մեր վաթան, Սարսուռացին ձորեր լեռ-լանջ, Հայ կտրիճներ երբ տեսան:

Թնդաց երգով հայ կտրիճին, Մօսուկ-Ջօրի ձոր ձորեր, Կուրիք տղերք՝ ամեն դէ՛՛ք՝ Արձազանգնեց սրտով զոս:

Մօսուկ-Ջօրի ձորեր հող ջուր, Գուրու քուրան էր բռներ, Ա՛խ կուրէ էր խուլ ամենի, Սար ու ձորեր մուխ բոց էր:

Այն ի՞նչ ժամ էր սրբազան ժամ, Եկան կուրէ վայր մէկ-մէկ... Նահատակներն ազատութեան՝ Բաց վէրքերով արնաներկ:

Ա՛խ այն առիճ մեր Մինասն էր՝ Սուրբ Մարտիկայ ժայռի գաւակ, Ինկու կողքին քաջ Բարկէնի, Ազատութեան սրտին տակ:

Ազատութի՛ւն... Ազատութի՛ւն... Խօլ քամին էր մեզմ երգեց, Ջարթէ՛ք քաջե՛ր, ձեր ճակատներ, Ազատութիւն համբուրեց...:

Ուխտաւոր

ՆԱՄԱԿ ԽՄԲՍԳՐՈՒԹԵԱՆ

Որբերու խնդրէն նորութիւն մը չկայ. Էգնանան չուզելով խոստանալ իր որբերու համար ընկելք բարեգործութիւնը Փարիզի հայ գաղութը ներկայացնող պատգամաւորութեան առջեւ, կ'ուզէ որբերը անմիջապէս Պօլիս զրկել՝ առանց սպասելու Փրօկօրօրին տրուած բողոքի պատասխանին:

Ի՞նչ պիտի ըլլայ որբերու վիճակը, եթէ նոյնիսկ Էգնանան այս անգամ իր խոստումը կատարէ... Իսկ եթէ չուզէ կատարել... և մանաւանդ եթէ իյնայ մեռնի՞...:

Թիւնն ա՛լ, բայց երեւի ա՛լ ժամանակն եկած է անոր ոսկէ զկողմնէրը կտրելու և անկէ իրեն համար խաչ մը շինելու... Եթէ չարունակէ հայութեան քթին խնդալ:

Բարիք, 23 հոկտ.

Աղեքսանդրիա, 13/26 հոկտ. 1904

Յարգելի խմբագրութիւն «Շարժում»ի Վասնայում

Այս յօդուածս մտադրած էի «Շարժում»ի համար պատրաստել, երբոր մի օր Տիար Տօքթ. Կ. Ուզունեան ինձ մօտ եկաւ յատկապէս հարորդելու համար «Ժողովուրդ»ի խմբագիր Տիար Ա. Պալեանի իր նամակին մէջ ինձ նկատմամբ գրած տողերը, որով Տ. Ա. Պալեան կը հրաւիրէր ինձ Էւզատ Բեմի դէմ իմ գրելիք յօդուածս իր «Ժողովուրդ» թերթին յղելու նախազգացումով մը մասնաւոր նստակով գրեցի Տ. Ա. Պալեանին. որ առանց խմբագրական կրճատումներու եթէ յօդուածս կը հրատարակէ, պատրաստ եմ իրեն յղելու:

Պատասխան ստացայ, որ եթէ անձ նական խնդիրներ չեն յուզուած, ոչ միայն չեն կրճատուիր, այլ նաեւ սիրով կընդունուին թէ՛ խմբագրի եւ թէ՛ ընթերցողի կողմէն:

Արդէն սկզբունքով հակառակ ինքնելով բուն խնդիրը թողած անձերով զբաղիլ, այս յօդուածս պատրաստելով իրեն զրկեցի:

Բայց հիասթափուած մեծ եղաւ, երբոր յօդուածս ինձ վերստին արձուցաւ խմբագրին կողմէ, մասնաւոր նամակով մըն ալ յանձնարարելով, որ Տիար Արտաւազդ Հանուսեանի խօսքը վկայութեան կոչելու փաստս բարեփոխեմ եւ պէյերու անունները չնջեմ: Կուցէ մասամբ կարելի լինի մի այսպիսի բարեփոխում, հակառակ այդ մասին ունեցած գրուած փաստերուս, ի՞նչեւ այդ մասին չեմ ալ մտածած, այլ գուցէ կարելի էր կըսեմ. բայց հիասթափմանս պատճառը ուրիշ բան է. խմբագրին հետեւեալ տողերը կարգաւոր հիասթափմանս հետ խորին ցաւ մը զգացի, այսպիսի ազատ երկիրներու մէջ Պօլիսը նախկին եւ գուցէ մասամբ այժմեան ինկած հայ լրագրութեան վարչնոց եւ փողոցային բարքերու վերանորոգումը տեսնելով... Փաշայներ եւ թէյեր, ազգային պաշտօնեայներ եւ հարուստ անձնաւորութիւններ թերթերու մէջ անարժանաբար փառաբանել, գովել եւ մինչեւ երկիրք բարձրացնել—միայն զրամ շորթելու համար. նոյն անձնաւորութիւնները յանրաւի անպատել, անարգել եւ զեխի մէջ թաթխել—գարձեալ միայն զրամ շորթելու համար. հարսանիքներու, մահերու, եւ բարձր պաշտօնի կոչուելու առիթներով գովաբանող եւ շողջորթող խմբագրական պիւնակներ հրատարակող հասարակութեան—միմիայն զրամ շորթելու նըպատակաւ. սուրիներ ստեղծել յօդուածներ ընդունելու—միայն ու միայն զրամ շորթելու համար. վերջապէս որ մէկը թեւեւ կարծէ, որ հայ լրագրութեան ինկած բարքերուն մէջ ուսումնասիրութիւնը մասնաւոր խրատով հրատարակուի եւ տրպերը զուրս բերուի, որոնց բերանը գոցելու համար շատ զբաղանքներ զատարկուած են...:

Ահա այդ մեծագոյն խմբագրին մարգարտաւոր տողերը, որոնք անշուշտ մեր հայ լրագրութեան պատմութեան մէջ մեծ տեղ պիտի բռնեն... —Այս գրութեան հրատարակութիւնը բացայայտ է որ բազմաթիւ թշնամիներով պիտի հարստացնէ «Ժողովուրդ»ը: Թէպէտ անձնականապէս հոգեւորութիւնը ինձ հարկաւորութիւն է, ինչպէս նաեւ սակէ վերջը բոլոր ինկած եւ փողոցային թերթերը ձեռքս չը պիտի առնեմ, ապա ինչպէս մաքուր պահելու, հոգոյս անցորդութիւնը չը վրդովելու համար, եթէ նոյնիսկ ուզեն զիս իրենց ցեխին մէջ թաթխել:

Արայնբուրեւ եւ իր նմաններուն ցեխարձակումները երբէք չեն կարող գործիչի մը համարաւ նսեմացնել, երբոր այդ համարաւ շինուած է գործի վրայ, գործունէութեան վրայ, երբոր գործիչը իր համարաւ շահած է իր գործովը եւ ոչ թէ խօսքովը կամ ցուցամուտութեամբը. հետեւաբար այդպիսիները երբէք վախ չունին թէ անդամանող ցեխին մէջ թաթխուելով կարող է կորսնցնել իր թանկագին արժէքը, նոյն իսկ չեն ալ կասկածիր, եթէ ճշմարիտ գործիչներ եղած են եւ մաքուր կը մնան մինչեւ գերեզմանի դուռը:

Ճշմարիտ համարաւ չը գնուիր, այլ կստեղծուի:

Տօքթ. Կ. Փաշայնյան

մարգարտաւոր տողերը, որոնք անշուշտ մեր հայ լրագրութեան պատմութեան մէջ մեծ տեղ պիտի բռնեն...

—Այս գրութեան հրատարակութիւնը բացայայտ է որ բազմաթիւ թշնամիներով պիտի հարստացնէ «Ժողովուրդ»ը: Թէպէտ անձնականապէս հոգեւորութիւնը ինձ հարկաւորութիւն է, ինչպէս նաեւ սակէ վերջը բոլոր ինկած եւ փողոցային թերթերը ձեռքս չը պիտի առնեմ, ապա ինչպէս մաքուր պահելու, հոգոյս անցորդութիւնը չը վրդովելու համար, եթէ նոյնիսկ ուզեն զիս իրենց ցեխին մէջ թաթխել:

Արայնբուրեւ եւ իր նմաններուն ցեխարձակումները երբէք չեն կարող գործիչի մը համարաւ նսեմացնել, երբոր այդ համարաւ շինուած է գործի վրայ, գործունէութեան վրայ, երբոր գործիչը իր համարաւ շահած է իր գործովը եւ ոչ թէ խօսքովը կամ ցուցամուտութեամբը. հետեւաբար այդպիսիները երբէք վախ չունին թէ անդամանող ցեխին մէջ թաթխուելով կարող է կորսնցնել իր թանկագին արժէքը, նոյն իսկ չեն ալ կասկածիր, եթէ ճշմարիտ գործիչներ եղած են եւ մաքուր կը մնան մինչեւ գերեզմանի դուռը:

Ճշմարիտ համարաւ չը գնուիր, այլ կստեղծուի:

Տօքթ. Կ. Փաշայնյան

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՏԸ ՄՏԱՌՈՂՆԵՐՈՒՆ

Պարսկաստանէն Աղեքսանդրիա ճամբորդելու միջոցին Թիֆլիս հանդիպելով, Մշակի, Մուրճի խմբագրութիւնները եւ Լոյս տարեցոյց—հանդէսի խմբագիր-հրատարակիչ պր. Նիդիէ Թօփչեան ինձմէ մասնաւորապէս խնդրեցին որ Եգիպտոսէն բոլոր մասին իրենց թերթին եւ հանդէսներուն տեղեկութիւններ հարորդեմ:

Եւ որովհետեւ Մուրճ եւ Լոյս հանդէսներու համար խնամեալ եւ լաւ ուսումնասիրուած յօդուածներ հարկաւոր էին եւ ես իբրեւ նորեկ

միջոց չունէի այդ աշխատութիւնը կատարելու, խնդրեցի Արճիսի խմբագրութեան պ. Աւօրն, որ երկար ժամանակ Եգիպտոսում ապրած ըլլալով, ինքը պատրաստէ այդ յօդուածը: պ. Աւօրն իր այդ աշխատութիւնը հրատարակած է Մուրճի այս տարւոյ 6 եւ 7 թիւերուն մէջ եւ որուն համառօտութիւնը պիտի հարորդէր Արճիսի խմբագրութեան:

Իսկ ես Մշակի խմբագրութեան յղեցի իմ թոռ ցիկ տպագրութիւններս, խղճամբար եւ անպառ թղթակցի մը յատուկ ուսումնասիրութիւն մը կատարելով, այսինքն հիմնուելով գրաւոր տպագրութեան եւ արժանահաւաս եւ գործին իրազեկ անձերու յայտարարութեանց վրայ, իմ այդ յօդուածները լոյս տեսան «Մշակի» այս տարուան 35-88-121-122 եւ 162 թիւերուն մէջ:

Այս յօդուածներու մէջ ի միջի այլոց հետեւեալ տողերը գրած էի:— Ախր ան հարուստ եկամուտ ունեցող գաղթականութիւնը մինչեւ իսկ կանանաւոր ծիական մի զարոց չունի: Կանիւրէն եւ Աղեքսանդրիա յուժ գոյութիւն ունեցող զարոցները պարզապէս անկարող ուսուցիչներն են զարձել. ուսուցչական կրճատան անարժաններ, մանկավարժութիւնից բան չը հասկացողներ եւ նոյն իսկ յայտնի անբարոյականներ եւ փաշայները—բէյերի քմահաճոյքին ծառայող պոռնիկներ մուտ են գտել այդ սրբազան յարկերի տակ եւ անխղճութեամբ չեն արձանագործում են մատաղ սեպուղի կրթական գործը: Աւսուցիչներ եւ ուսուցչուհիներ պաշտօնի են կոչուած այս փաշայի կամ այն թէյի քմահաճոյքի շնորհիւ, եւ ի հարկէ նրանց ասոյժ թնոյղ, նրանց շողջորթող եւ պաշտօն մտրօլու աստիճան ստորանայողներն են, որ ընտրվում են, բաւական է, որ մի փաշայ կամ թէյ հրամայեց, իսկոյն հրամանը կատարվում է, զատարկագորտը, անարժանը չաղ ոտճիկով ուսուցիչ է կարգվում...:

Այս տողերս Ազատ Բեմի խմբագրութեան եւ մի քանի մարդկանց շիջեցնուած զպեղով, այդ ճշմարիտ իրողութիւնները ուրանալու ստորին ասոյժ գացին եւ բուն խնդիրը, սկզբունքը թողած, անիրաւ եւ ոչ պատասխար յարձակումներ գործեցին անձնականապէս նկատմամբ, եւ ամէն ճիգ ու ջանք թափեցին փաշայները, թէյեր եւ ուսուցիչները գրգռելու, որպէսզի անոնք ինձի դէմ դատ բանալով, ազգային խայտառակութիւններ օտար դատարաններու առջեւ բերեն եւ այդ կերպով զանազան անձնաւորութիւններ անպատուին:

Ահա տեսէք ինչ կը գրէ Ազատ Բեմը:

«Գիտէինք թէ մեր վարժարաններու մէջ անկարող ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ կը գտնուէին, բայց մեզի ծանօթ չէր մինչեւ հիմա թէ յայտնի անբարոյականներ ու փաշայները—բէյերի քմահաճոյքին ծառայող պոռնիկները մուտ գտնուէին անոնց մէջ...»:

«Մեր մասին, յանուն ազգային դատարարական պիտի փափաքէինք որ ուսուցչական խումբը գոնէ պատուոյ տեսան մը պատանջէր այս կեղծաւոր շարքաւանին դէմ, Բաց աստի, որովհետեւ խնդիրը ոչ միայն ուսուցիչներուն եւ ուսուցչուհիներուն շուրջը կը դառնայ, այլեւ այն պէյերուն եւ քաշաներուն որոնք սի-

րենց քմահաճոյքին ծառայեցնելով... Գրեցին ինքնաբերաբար զանոնք կը նստեն...

Թեւեք նաեւ նոր փաստերն ալ, որոնք երեւան եկան մեր Մշակ-ի մէջ...

Տ. Կ. Փաշայեան (Շատուկապետ)

Յարգելի Պ. Սարգսի,

Կարգաւոր Պ. Նալբանդեանի տւած պատասխանը Պ. Զաքարեանին, պարմանում ենք որ ձեր տրամադրութեան առկա ունեւորով...

Յարգանքներով Լոզանի Ուսանողական Կօմիտէ

Մ. Ս. Աւելի լաւ էր գտեք փաստաւորութիւնը ձեր քննարկումներէն, որոնք չէինք կասկածում, բայց ուրում էինք որ դուք ապացուցէք որ ձեր քննարկումները չէ կեղծում...

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ Նշանակ 27 Հոկտ. 1904

Վերջերս Ամերիկայի գաղութը կսկսի կամայ-կամայ գրտակցութեան նոր փուլի մը մէջ մտնել, ամէն անգ...

Ճիշդ է թէ ուր է հայ գաղութի մը աւելի հոս է որ կը վտանգահարուի յեզափոխականներն ու շարժառնները, խաբէրանքն ու իրաւագործները, մասնիկներն ու ազգայնական դաւաճանները...

Ի նպաստ երկրի յեզափոխական գործին եղած հանգանակութիւնները մինչեւ այժմ, անցեալ տարիներու հետ թաղապետով կրկնապատկեր եղած են, և տակաւին կըլլան, Ամէն գաղութի մէջ ալ Դաշնակցական ընկերներու թիւը բազմապատկուած է, այս տարի տասնեակներով է որ կուգան ըստուարացնելու հայ յեզափոխական բանակը:

Տարօնի թշուառներուն օգնելու պէտքը որ Հայրենիքը քանիցս յիշեցուց այժմ արձագանգ գտած է ամէն գաղութի մէջ ալ գրեթէ, մէկ-երկու տեղեր արդէն հանգանակութիւն կատարած են, իսկ ուրիշ տեղեր ալ ջանքեր կըլլան ընելու: Ամերիկայի Առաջնորդ Յովսէփ Արքեպ. Սարաճեան այս առթիւ «կոչ» մը ըրած է մամուլի միջոցաւ ըլլոր հայերուն որ անխտիր օգնեն այս գործին, թէեւ քիչ...

մը ոչ է, բայց կը յուսանք թէ բաւական արդիւնաւոր պիտի անցնի: Տարօնէն եկած լուրեր շատ գէշ կը նկատուին ժողովրդի գրութիւնը 15-20 հազարի չափ ժողովուրդ մերկ, անօթի, աստ անց կը թափառին, մենք արտասահմանի հայերս պիտի թողունք որ անոնք այնտեղ սոված մահ մեռնին, ամէն հայ պարտակառնութիւն մը ունի իր վրայ բողոք մը հաց հասցնելու մեր Տարօնցի կարիճ եղայրներուն:

Ես պիտի թելադրէի մեր Պուրկարի ու Ռուսներու հայրենակիցներուն, որպէս զի իրենք եւս հետեւէին Ամերիկահայի այս գեղեցիկ օրինակին ու իրենք ալ սկսին իրենց մէջ հանգանակութիւններ կատարել ինչպսպար Տարօնի մեր եղայրներուն:

Շարժում 643 թիւի «Հնչակ»-ին քննարկողականութիւնը խորագրով տառապանակով յօդուած Պարսկաստանի Հնչակեաններու մէջ իրարանցում մը յառաջ բերած է, կատարած ու փոքրած են, և ինչ ընելիքներն չգիտեն, ելած են մինչեւ Ամերիկայ լսելի ընել տալ կուգան իրենց անճոռնի վայնասունը, իրենց Երիւսաղէմի Հայաստան ըստած պըֆ տարակի միջոցաւ:

Ո՞րք Ս. Սուրբնեան լորճուներ բերնին, կը պոսայ, կը ճւայ և «ակամայ մի քանի խօսք» կըսէ, բայց հազիւ հազ կարող եղած է իր փորուն ցաւը յայտնել ուրիշ ոչինչ, բաւերու գիկզակ շարք մը այնպէս որ ընթերցողը չեմ կարծեր թէ բան մը հասկնայ տակէ:

Որչափ ալ տխուր եղած են որ ելած են ըսելու թէ «Դաշնակցութիւնը Հնչակեան գործերը կը շահագործէ և անով ալ կը պարծենայ»: Բայց ինչ կարելի է սպասել կուսակցութենէ մը որ իր գոյութեան օրէն մինչեւ այսօր գործ ըրած է իրեն սուտերով և խաբս-խաբուսներով հայ ժողովրդին աչքը թող փչել, իր գոյութիւնը քարշ տալու համար:

Դաշնակցութիւնը երբէք պէտք ըզգացած չէ շահագործել և պարծենալ Հնչակեան գործերով, եթէ կայ կուսակցութիւն մը, որ շահագործած է ուրիշին գործերը և անով պարծենցած է, ատկիպ ալ Հնչակեան կուսակցութիւնն է, անպարտ կուգէ՞ք, ահա ձեզի ապացոյց:

Անցեալ տարի երբ դաշնակցութեան զինակիր «Մրիկ» խումբը երկիր անցաւ, էրգորումը վային տարածայնութիւն մը ըրաւ թէ «600 հնչակեաններ նրկիր մասնաւոր ամերիկեան թերթերն ալ արտապեցին, հին հնչակեաններու կիսապաշտօնական օրկան «Ե. Հ. թուղթի կտորը» թարգմանելով կըլլեցուց իր ընթերցողներուն, ու աւելցուց թէ «հնչակեան սուրբ կրկին սկսաւ զոգով հայ ժողովուրդը»: «Հայրենիք»-ը գիտել տուաւ թէ էրգորումը վային այդ լուրը գիտմամբ հրապարակ նետած է-«600 չեն երկիր անցնողները, եւ անուներու մէջ ալ չիփոխութիւն մը ունեցած է վային, երկիր անցնող խումբը եւ կամ խմբերը դաշնակցականներ են, մէկ հատ հնչակեան անցած չէ եւ նոյն իսկ մինչեւ երկրտէս վկայութիւններով հաստատուեց իր ըսածները, բայց «Ե. Հ.» տոնաց խպնելու շարունակեց իր պըֆօթիութիւնը, առանց ո եւ է վիպաս մէջտեղ բերելու: միակ փաստը որ ունէր այն էր թէ, ամերիկեան թերթերը այդպէս գրած են եւս, ու այնչափ ալ յառաջ գնաց որ ելաւ փչեց թէ սերկու խումբ...

արդէն գնացած ու սեղաւորուած են եւ խումբ մըն ալ գնացած է, հնչակեան զինուորները իրենց պարտակառնութեան դաշտին վրայ են... Եւն» Մինչդեռ իրականութիւնը այն էր որ այդ խմբերը դաշնակցութեան խմբեր էին զինակիր Մրիկ խումբը եւ Ռուսներ մէջ կուսող խմբերը, մէկ հատ հնչակեան անցած չէր, «Հայրենիք»-ի գրածին պէս իրօք որ էրգորումը վային անուներու չիփոխութիւն մը ունեցած էր:

«Ե. Հ.» եւ Ամերիկայի հին հնչակեանները շահագործեցին այդ տխուր խումբը եւ հոտած գանձի նման թափած իրենց ընկերներուն յոյս ու հաւատք ներշնչեցին, ո՞րք էին այն ատեն Ս. Սուրբնեանի նման սինըօր արարածներ, ինչո՞ւ չէին բողոքել թէ «Հ.»-ի այդ պըֆօթիութեան զէմ որ դաշնակցութեան գործերը կը շահագործէր, միթէ այն ատեն իրենք չէին կարգար այդ թղթի կտորը, ինչո՞ւ լուսեցին այդքան յայտնի շահագործութեան մը զէմ, չէ՞ որ իրենք ալ գիտէին որ մէկ հատ հնչակեան երկիր անցած չէ, ինչո՞ւ, ինչո՞ւ, պապանճումն Զաքարիայի եղան այն ատեն ու այսօր ելած են շան կազկանձերներով մեր ականջները կը խլացնեն, վայ անամթներ, վայ, գեռ երես ալ ունիք այդպիսի խօսքեր ըսել մեզի:

Դաշնակցութեան ունեցած այնքան փաստաւոր գործունէութիւնը, օրուան պահանջին համաձայն, զիրենք շատ նեղ ձգած, ամէն օր կը փորձեն նոր սուտեր հրապարակ նետել ան վարկաբեկելու համար՝ իրենք հագեցուածք մէջ ըլլալով հանդիման դեռ կը ճգնին իրենք զիրենք ցոյց տալ հնչակցականութիւն մը, բայց չեն ուզեր որ Դաշնակցութիւնը խօսի իրեն ըրած գործերուն համեմատ:

Մեռած-դիակ դարձած կուսակցութեան մը ճիգերը որքան ալ հսկայական գերմարդկային ըլլան, դարձեալ անգոր են հոսանքին առջեւ առնելու, հայ ժողովուրդը շատ լաւ ճանչցած է զիրենք այսօր, եւ ընդբարձրասպանման գիւրդով ալ պատկած, Միտի, Չիթեանի եւ Շիրվանի արիւնն է որ կը բողոքէ իրենց զէմ այսօր:

Երջանի՛կ են:

Երուսեղ-Նուրոս

ՆԱՄԱԿ ՌՈՒՍՉՈՒԿԷՆ

— 0 —

Խնդիր եղած է թէ ինչու շարժադրուակն մեր ցանկերէն ակնկալուած չե՛ր:

Մենք իրեն անխոնջ աշխատասերներ գտնելով մի անպատրաստ հող ուր կարտադրուէր միայն կամայական անպէտ թոյսեր և միայնգամայն զնասակար փուշեր, մտածեցիք միանգամայն փոքրիկ հողը այդ անպէտ բուսականութիւնից և ցանկ մեր օգտաշատ սերմերը, և այս նկատումով ներկեցինք հողը և ցանեցինք սպասելով արդիւնքին, բայց երբէք չմտաբերեցինք թէ հողը որ պարտներու ընթացքին մէջ անձակ անտես էր արտադրած էր իր մէջ տեսակ մը սպողուն և վնասակար ճճիներ որոնք պատրաստ էին ամէն վայրկեան փճացնել մեր ակնկալած յաջողութեան համար ցանած սերմերը, ու այդ բնական էր, մենք ալ չէինք կրնար պընդել մեր ակնկալած յաջողութեան վրայ, եթէ խելացիներ էինք պէտք...

էր հրաժարի մեր աշխատութեան պը-  
տուկները քաղելուց. ջնջել անօրինակ  
մեր ցանքը և անյաջողութեան  
բուն պատճառները ըմբռնած ըլլալով  
պէտք էր հողը պարարտացնել և սո-  
ղուն ճճիները փճացնել:

Այդպէս ալ եղած էր մեր գաղթա-  
կաններու իրաւունքը պաշտպանելու  
խնդիրը. մենք կը մաքառէինք նախ-  
կին թաղականներու և մի քանի ա-  
զաններու դէմ և կրցած էինք վերջա-  
պէս յաջող կերպով քիչ ժամանակա-  
միջոցի մէջ համաձայնութեան մը գալ  
և շատ ուրախ էինք թէ խնդիրը կն-  
ճոտ հանգամանք մը չէր առած,  
բայց գանուեցան կարգ մը պարտիկ-  
ներ որ յանձն առին պաշտպանել զի-  
նչողներին, անոնք ալ կարծելով թէ  
իրենց հետ միացող երիտասարդ ոյժնե-  
րը կարող են շատ բան ընել իրենց  
տուած խօստուածէն ետ կեցան և սպա-  
սեցին խնդիրին վերջաւորութեան:  
Մեր պարտիկները առանց ամօթանա-  
լու յայտարարեցին թէ իրենք իրենց  
բոլոր միջոցներովը մեզի դէմ պիտի  
մաքառին և նամանաւանդ Պ. Յարու-  
թիւն Փափազեանը ասպարէզ  
իջնա իրեն գաղանի և յայտնի պաշտ-  
պանութիւնը կատարելու և ի հարկէ  
իրենց կարծելով յաջողեցան և մեծ  
եղաւ իրենց ուրախութիւնը: Բայց ա-  
հա մեր Շարժում-ի 658 թուի մէջ հը-  
րատարակուած գրութիւնը կայծակ-  
նահարեց ամենին և ասոր յաջորդեց  
պապանձումն Զաքարիայի. բայց պա-  
րտններ և պարտիկներ պապանձումը  
մեզի գոհացում չտար. մենք կուգինք  
և պիտի խնդրենք ալ Շարժում-ի  
պատուարժան խմբագրէն որ մեզի ալ  
բաց անէ սիւնակ մը իւր ազգագուս-  
թերթին մէջ որով կարենաք մեզ ար-  
գարացնել հանրութեան առջեւ:

Հեսարֆիտ երիտասարդներ  
14 Հոկտ. 1904  
Ռուսոյնկ

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուլկար կառավարութիւնը բո-  
ղոքած է Բ. գրան դպրոցներու  
վերապահուել նախնային և ուսուցիչ  
Գէնեւի ձեռքադրման համար:

— Յունաց պատրիարքի և ա-  
նոր հակառակող յոյն եպիսկո-  
պոսներուն խնդիրը հետզհետէ  
կը բարդանայ:

Միտիլին կղզիին յոյները կը  
պախարակեն եպիսկոպոսներուն  
բռնած ընթացքը:

Նախարարական ժողովը կը զբա-  
ղի այդ խնդրով և շուտով պա-  
տասխան պիտի տայ պատրիար-  
քին:

— Էտիրնէի վայրի, Արիֆ փա-  
շայի կեանքի դէմ Պուլկարիայէն  
գաղթած թուրք մը սպաննու-  
թեան փորձ ըրած է:

Փաշան վնասուած չէ, բայց ա-  
նոր աթիւսանստը ծանրապէս վի-  
րաւորուած է:

— Հոկտեմբեր 4ին Պոլսէն կը  
հեռագրեն որ Էտիրնէի գաղթա-  
կաններու վերադարձին խնդիրը  
կրկին բարդուած է: Բ. գուռը  
Պուլկար կառավարութեան յայ-  
տարարած է որ այդ խնդրին ու-

տեմնասիրելը գեռ անկարելի է:  
— Պուրքէի մէջ լուր տարած-  
ուած է որ Ռուսէն ազգային պայ-  
քան մասնաճիւղ մը պիտի բանալ  
Բիտոլիոյ մէջ, որուն նպատակը  
պիտի ըլլայ ուժ տալ Ռուսման-  
կան բրոֆաքանտին:

— Հոկտեմբեր 26ին Պոլսէն կը  
հեռագրեն թէ Բ. գուռը Ռուսա-  
կան և Աւստրիական զենայանի-  
րուն պատասխանած է որ համա-  
ձայն չէ Մակեդոնիոյ մէջ օտար  
սպաններու թիւը աւելցնել, Իսկ  
զենայանները սպաններու աւելցու-  
մը անխուստօքի ի կր համարեն:  
Երկու նոր ուսու սպաներ արգէն  
Սելանիք հասած են, միւսներն  
ալ շուտով պիտի հասնին: Եթէ  
Բ. Գուռը մինչեւ այն ատեն չը  
պատրաստէ պայմանաթուղթը,  
սպանները պիտի տեղաւորուին  
Միւրցլտէկի ծրագրին համեմատ:

#### ՌՈՒՍԻԱ

Հոկտեմբեր 24ին Բեթերսպուր-  
կէն Վիէննա կը հեռագրեն թէ  
նեքերն գործոց նախարար Միրս-  
կիի կացութիւնը խաղաղուած է:  
Լա գիտակից շրջանակները կը  
վստահեցնեն որ Միրսկիի պիտի  
հրաժարի որովհետեւ պալատա-  
կանները զինքը կը հաւածեն:

— Սելեմտից նախարար Քո-  
քովցէի Ռուսիոյ ինքնավար կա-  
ցութիւնը լուր կը համարէ, և կը  
յայտարարէ որ կայսերական  
պանքան մէջ միւլեար ոսկի ունի:

— «Իրթի բարիզիէն» թերթը  
կիմանայ թէ ռուս Ռալիկիան  
նաւատորմիցը Հնդկական ովկիա-  
նոսի մէջ պիտի զօրեզանայ 7  
նոր զրահաւորներով. որոնք գն-  
ուած են օտար պետութենէ մը:

#### Ա Ի Ս Տ Ր Ի Ա

Ինսպրուկ քաղաքին մէջ հա-  
մալսարանի իտալական իրաւա-  
բանական ճիւղի բացման առթիւ  
զերմանացիները կատաղած յար-  
ձակում գործեր են իտալացիներ-  
րուն վրայ. իրաւաբանական բաժ-  
նի շինութիւնը քարուքանդ ըրեր  
են, մէջը գտնուած կահ կարա-  
սին խորտակեր են. իտալացիներ-  
ը զէնքով պաշտպանուեր են:  
Գերմանացիները աւելի կատղե-  
լով յարձակեր են իտալացիներ-  
րու խանութներուն վրայ, ոչնչա-  
ցուցեր են իտալերէն գրուած  
ցուցագրերը, փշրեր են պատու-  
հանները:

Գերմանացիներուն այս բառն-  
կումը կը վերագրեն գերման ե-  
րեսփոխաններու գրգռումին. որ  
չարունակուեր է ամիսներէ ի վեր:

#### ՅՐԱՆՍԱ

Հոկտեմբեր 22ին ֆրանսական  
երեսփոխանական ժողովին մէջ  
մեծ իրարանցում մը տեղի ունե-

ցեր է. պատերազմական նախա-  
բար Անտրէ երեսփոխան Սիֆո-  
նի կողմէն բուռնաբար հարաւան-  
բու ենթարկուեր է:

Սիֆոնի կը յայտարարէ որ կան-  
խամտածութեամբ զարկեր է մէ-  
նէրալ Անտրէի, պայն անպատ-  
ուելու համար:

Պատժական օրինաց համաձայն  
Սիֆոնի երկու տարուան բան-  
տարկութեան պիտի դատապար-  
տուի:

#### ՍԵՐՊԻՍ

«Յայթ» թերթը կիմանայ թէ  
Սերպիոյ թագաւորը կուգէ այցե-  
լիլ նաեւ ռուսական թագաւո-  
րին:

— Նոյն թերթը Պելկրատէն  
կիմանայ թէ հոն կը վախճուի որ  
Ալէքսանտր թագաւորը սպաննող  
սպաններու և անոնց հակառակորդ-  
ներու միջեւ ընդհարում տեղի  
ունենայ, «Ընդդիմադիր» թեր-  
թի մէջ հրատարակուած յօդուած-  
ներուն պատճառով:

#### ՌՈՒՍԱՆԿԱՆ ԲՐՈՍԱԿԱՆՏԱՆ

#### Մակեդոնիոյ միջ

«Ռու. Քորէ»-ի հոկտեմ. 24ին  
Պոլսէն կը հեռագրեն հետեւեալը.  
Վերջին ամիսներու մէջ ռու-  
սական բրօսականտան շատ զօ-  
րեղացած է և օրաուր մեծ յառա-  
ջագիծութիւն կընէ Քոսթուրի,  
Լեբիւնի և Օխրիտայի թեմերուն  
մէջ: Յոյն մետրոպոլիտները այդ  
մասին պատրիարքարանի տեղե-  
կութիւն տուած են:

Այդ առթիւ պատրիարքարանի  
և Սինօզի միջեւ խորհրդակցու-  
թիւններ տեղի ունեցեր են. կա-  
ուի թէ քանի մը մետրոպոլիտ-  
ներ պատրիարքին և սինօզին  
խորհուրդ տուեր են ռուսական-  
րուն փոքրիկ զիջողութիւններ  
ընել, որովհետեւ եթէ անոնց  
գոհացում չը տրուի, կը վախ-  
ցուի թէ ռուսներն ալ հրաժա-  
րին, որուն անմիջապէս պիտի  
հետեւի ռուսներէ եկեղեցիին բա-  
ժանումը պատրիարքութենէն:

Կը վստահեցուի թէ պատրիար-  
քական տազնապը անցնելէն ան-  
միջապէս յետոյ այդ խնդրով պի-  
տի զբաղին. սակայն մեծ զիջո-  
ղութիւններ ըլլալու յոյսեր չկան:

#### ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

#### Գ Ա Տ Ն Ր Ա Ջ Մ

Հոկտեմբեր 24 Լոնտօնի թեր-  
թերը կը հաղորդեն թէ Յարը  
լիազօրութեան թղթեր զրկած է  
Բորթ-Արթուրի հրամանատար ըն-  
թօսէլի ապագայ գործունէութեա-  
նը մասին. սակայն հնարաւորու-  
թիւն չը կայ այդ իրեն յանձնե-  
լու:

— Թօքիօն հոկտ. 24 կը հա-

ղորդեն թէ լուր տարածուած է  
որ ճարտնացիները կրկին ամբու-  
թիւն մը գրաւեր են Բորթ-Ար-  
թուրի քով:

— Չիֆուէն Պոլսանդարս թեր-  
թին հոկտ. 25ին կը հեռագրեն  
որ գիշերային սարսափելի յար-  
ձակումներ տեղի ունեցան. ճարտնացի-  
րը յաջողեր են գրուել երեք  
ամբութիւններ եւս, իսկ Լեա-  
թէշանի քով ռուսները բոլորու-  
վին ջախջախուած են:

— Չիֆուէն կը հաղորդեն որ  
ճարտնացիները Բորթ-Արթուրի  
ներքին ժողովի մէջ ու կէս քիւր-  
մէթրօ հեռուորութեան վրայ ամ-  
բացեր են:

#### Յ. Ղ. ՔՍԱՍՆՈՒՄ

Ամսոյս 16ի պուժարող ընդհ.  
ժողովոյ մէջ կատարուած գործ.  
ժողովոյ նոր ընտրութիւնը ըստ  
օրինի ամբողջացած չըլլալուն  
պատճառաւ, դիւանս ներկայիս  
կուզայ թախանձագին խնդրել  
պատուարժան անդամներէ որ ի  
սէր ազբատաց բարեհաճին նեկայ  
գտնուիլ յառաջիկայ կիրակի  
31 հոկտ., գումարութիւք ընդհ.  
ժողովին, Ազգ. վարժարանի մէջ  
կէսօրէ յետոյ ժամը 2ին, ուր  
պիտի կատարուի Գործ. ժողովոյ  
վարչական ընտրութիւնը:

Այս շորթօք հրաւերը ըլլալով  
ներկայ գտնուող անպամօց թիւը  
ինչ որ ալ ըլլայ, ըստ կանոնա-  
րի ընտրութիւնը պիտի կատար-  
ուի, որմէ յետոյ գիտողութիւնք  
անլսելի կը մնան:

Աստիապիր Աստիապետ  
Դիւան ընդհանուր ժողովոյ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵՂԸ

Ծնորհակալութեամբ ընդունե-  
ցինք Հայ Ռուսանդական Միւ-  
թեան հրատարակած Հայաստանի  
Քարտեղը, չքեղ կազմով:

Քարտեղի գինն է մէկ ֆրանկ  
Ռուսաստանում կէս րուպլի. Ամեն  
հայ պարտաւոր է ունենալ այս  
սիրուն և աժան ու բաւական խը-  
նամքով պատրաստուած քար-  
տեղը:

Հասցէ՝  
Իւնիօն Տէ Էփեսեան Արմենիկ  
S'korouy  
Րիւ չը զեֆոյ օր Շիւսի  
ԺՆԵՎ

#### Отговорникъ Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна